ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2017թ. թիվ 485-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 16.01.2014թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 16-Ն և ՀՀ կառավարության 09.11.2017թ. «ՀՀ 2017թ. պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու ու գումար հատկացնելու մասին» թիվ 1438-Ն որոշումները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ և ճշտումներ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր